

**Ռանկնդրեցե՛ք ՌԱՏԻՕ ՍԵՒԱՆ-ը**  
Լիբանանի բոլոր շրջաններում մեջ, հետևեալ ալիքներում վրայ  
\* Լիբանանի և Սուրիոյ ծովագերեայ շրջաններում, Լեռնալիբանանի, Պեքալի, Սայտայի և Թրիփոլի մեջ՝ 101.5 FM ալիքին վրայ:  
\* Հիսթասային Լիբանանի մնացեալ շրջաններում մեջ 101.3 FM ալիքին վրայ:  
\* Պէյրոսի և Լեռնալիբանանի մեջ նաեւ՝ 90.8 FM ալիքին վրայ:  
Հեռ. : 01-567161-2-3 Fax: 01-567168  
\* Cablevision 11700 GHz digital. \* Կայքէջ: www.radiosevan.com

## «ՊԼՇՏՅՈՒՆԻԹԵԼՆ ՈՒՋՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԷՆ ԿՈՃԱԿՈՎ ԼՈՒԾՈՒՆԵԼԻՔ ԹՎԹԱՎՈՐՄԱՆ ՄԷ ԶԷ», Կ'ԲՍԷՆ ԵՎԵՆԱԳՎԱԿ ՍՐԷԼԷՅԱՐԵՆ

«Հաւատես», «Լա Ռիփլի Տի Լիպան», «Ալ Պայրաք» և «Մանտէ Մորնիկ» լրատուական միջոցներում տուած հարցազրոյցին մէջ, հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյման կ'ըսէ, թէ պաշտպանութեան ռազմավարութեան թղթածրարը անկարելի է մէկ կոճակով ամբողջացնել: Նախագահ Սըլէյման շօշափելի փոփոխութիւն մը կը նկատէ նախագահ Պարաք Օպամայի արտաքին քաղաքականութեան մէջ, մտադրելով, որ առիթը ընծայուած պահուն հանդիպում մը ունենայ նախագահ Օպամային հետ:

Նախագահ Սըլէյման կը դրուատէ երկրին ազգային անվտանգութեան երաշխաւոր լիբանանեան բանակի դերակատարութիւնը: Հարցազրոյցի վերջաւորութեան, նախագահ Սըլէյման պատրաստակամութիւն կը յայտնէ ընդառաջելու միջազգային դատական ատենակի բոլոր որոշումներուն: Հանրապետութեան նախագահին կարծիքով, խորհրդարանի ընտրութիւնները պիտի աւարտին կողմերու միջեւ աննշան տարբերութեամբ:

## ՊԸՐՐԻ ԿԸ ՍԱՂԹԷ, ՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ ԸԼԼԱՆ ԱՄԲՈՋԱԿԱՆ



Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի այցելեց Պապատայի պալատ և հանդիպում մը ունեցաւ հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյմանի հետ: Պըրրի ըսաւ, որ նախագահին մաղթած էր պետական բոլոր նշանակումները միացեալ կողովի մէջ ամբողջացնելու իր ցանկութիւնը: Պըրրի իր զարմանքը յայտնեց ակնապատուած տարածաշրջաններուն քարտեզը Իսրայէլի կողմէ Ֆիւնիլի Ուժերուն յանձնելուն առիթով լրատուական միջոցներուն կատարած արձագանգէն, դիտել տալով, որ Իսրայէլ, երկու տարի է ինը ամիս ուշացումով կը կատարէ իր ստանձնած յանձնառութիւնը: Ան նաեւ հարց տուաւ. «արդե՞՞ջ քարտէսներուն յանձնումը լրտեսական ցանցերուն բացայայտումը ծածկելու չէր միտեր»: Կ'արժէ նշել, որ լիբանանեան բանակը պաշտօնապէս ստանձնեց Հարաւի մէջ, ակնապատուած հողատարածութիւններուն քարտեզը:

## ԼՐՏԵՍԱԿԱՆ ՑԱՆՅԵՐԸ ԹԻՒ 1701-Ի ԲԱՑԱՅԱՅՏ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՆ

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնակազմի պատուիրակ Մայքըլ Ուիլիյմսը այցելեց Այն Էլ Թիմէ և հանդիպում մը ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ: Հանդիպումէն ետք, Ուիլիյմսը յայտնեց, թէ միջազգային ընտանիքը նախանձախնդիր է Լիբանանի մէջ ազատ ու խաղաղ պայմաններու տակ խորհրդարանական ընտրութիւններուն կայացման: Ուիլիյմսը ընդգծեց, թէ լրտեսական ցանցերու առկայութիւնը, թիւ 1701 բանաձեռի բացայայտ խախտում մըն է:

## ՀԸԶՊԱԼԼԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ Կ'ՕՏԱՆԴԱԿԷ ԿԱԶԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Լիբանանի մէջ, Հըզպալլայի փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասեմ բրիտանական «Ֆայնենշըլ Թայմզ» օրաթերթէն լրջ ընծայուած հարցազրոյցի մը մէջ կ'ըսէ, թէ Հըզպալլա հնարաւոր բոլոր միջոցներով օժանդակութեան ձեռք կը մեկնէ Կազայի բնակիչներուն: Քասեմ կը մերժէ մանրամասնութիւններ տալ օժանդակութեան եղանակներուն մասին. «Դիմադրութեան իրապատկութիւններէն մեկն ալ այն է, թէ մենք չենք փափաքիր խօսիլ մանրամասնութիւններու մասին», կ'ըսէ Հըզպալլայի ղեկավարը:

## ՎԱՐՉԱԿԵՏ ՄԻՆԻՐԱԿ Կ'ԱՐԺԵՒՈՐԷ ՄԱՐԿՈՐ ԿԵՆՍՈՒՈՐՏԻ ԸՆԿՐԱԾԵՆՏՈՒԹԻՒՆԸ



Վարչապետարանին մէջ, վարչապետ Ֆուատ Սիւնիորա հովանաւորեց կրօնի ու կենսոլորտի նուիրուած խորհրդատուները: Ան՝ կրօնապետերը յորդորեց բարձր գնահատելու և աջակցելու կենսոլորտի ապականութեան դէմ լիբանանեան կառավարութեան մղած պայքարին:

Վարչապետ Սիւնիորա ընդունեց ընկերային հարցերու նախարար Մարիո Աունը, ինչպէս նաեւ ներքին գործոց նախարար Չիատ Պարուտը:

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՔՆՆԱՐԿԵՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Լիբանանեան կառավարութիւնը երէկ երեկոյեան Պապատայի պալատին մէջ, հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյմանի գլխաւորութեամբ, և վարչապետ Ֆուատ Սիւնիորայի ներկայութեամբ զուարթեց ընթացիկ միտքը: Կառավարութիւնը



քննարկեց 108 կէտերէ բաղկացած օրակարգ մը: Լրատուական աղբիւրներ կը հաւաստեն, թէ կառավարութեան միտքին հիմնական օրակարգը դարձաւ սահմանադրական խորհուրդի անդամներուն նշանակումը: Սակայն ժողովը յետագոյն նշանակումներու թղթածրարը և քննարկեց ներքին գործոց նախարարին կողմէ ներկայացուած խորհրդարանի ընտրութիւններու նախօրէին գործարարութեան դրուելիք սպահովութեան ծրագիրը:

## ԵԳԻՊՏՈՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆԱՅԻՆ Է

Եգիպտոսի նախագահ Հիւսէյն Մուպարաք դիտել տուաւ, թէ ոմանք կ'անտեսեն Եգիպտոսի ազգային անվտանգութեան իրողութիւնը: Իսրայէլի հեռատեսիլէն սփռուած հարցազրոյցի մը ընթացքին, նախագահ Մուպարաք ըսաւ, թէ իբրեւ Եգիպտոսի նախագահ, իրեն համար Եգիպտոսի ազգային անվտանգութիւնը անելի գերադասելի է քան՝ Հըզպալլան: Մուպարաք, միաժամանակ՝ Պաղեստինի հետ, կողք կողքի երկու պետութիւններու ընտրանքը ընդունելու կը ուղղեց Իսրայէլի կառավարութեան:

## ՔՍՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Ուժանիւթի և ջրի մախարարութիւնը հրապարակեց վառելանիւթի այս շաբթուան սակացոյցերը: Արդարեւ, թիթեղ մը պենզի-գին գինը արժանագրեց 400 լիբանանեան ոսկիի յաւելում մը, իսկ «տիգըլ» քարիւղին գինը՝ 100 լիբանանեան ոսկիի յաւելում մը: Իսրայէլի գաղտնի սպասարկութեան կողմէ պատրաստուած տեղեկագիր մը կ'ըսէ, թէ Միջին Արեւելքի մէջ նոր պատերազմի մը հաւանականութիւնները նուազած ըլլալով հանդերձ, Հըզպալլայի կողմէ զինուորական որել փորձ, կամ գործողութիւն ցաւալի պատասխաններ պիտի ստանայ Իսրայէլեան բանակէն:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ.

### «ՃԳՆԱԺԱՄԸ ՉԳԱԼԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՂԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱՒ»

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի գնահատմամբ, համաշխարհային ճգնաժամը «զգալի բացասական ազդեցութիւն ունեցած է» Հայաստանի տնտեսութեան վրայ: Նախագահը դիտել տուաւ, որ անկումներ արձանագրուեցան տնտեսութեան հիմնական ճիւղերէն ներս՝ արդիւնաբերութեան, ուժանիւթի, շինարարութեան մէջ: Նախագահ Սարգսեան նշեց, թէ հակառակ տիրող տնտեսական ճնշիչ կացութեան կառավարութիւնը պիտի չէզոյս իր յայտարարած բարեփոխումներու ծրագիրը:

### «7-Ի ԳՈՐԾՈՎ» ՄԵՂԱԳՐՈՒՄԸ ՇԱՆՅՅԱՆՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՉԱՏ ԱՐՁԱԿՈՒՆԵՑԱՒ

Հայաստանի իրաւապահ մարմինները ազատ արձակեցին «7-ի գործով» զանգուածային անկարգութիւններու մէջ մեղադրեալ ՇանյՅ Յարութիւնեանը:

## ԱԼԻԵ-ԵՐՏՈՂԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Պաքոյի մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի և Թուրքիոյ վարչապետ Ռեճեպ Թայյիպ Էրտողանի միջեւ: Ըստ ազերի լրատուական միջոցներուն, հանդիպման ընթացքին քննարկուած են «քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներու մէջ Ատրպէյճանի և Թուրքիոյ միջեւ երկկողմ յարաբերութիւններու ներկայի իրավիճակը և հեռանկարները, որոնց մէջ՝ տարածաշրջանային և միջազգային հարցեր»: «Մենք նախապէս ալ, երբեք թոյլ տուած չէինք, որ Ատրպէյճանի և Թուրքիոյ միջեւ յարաբերութիւնները փճանան, այսուհետեւ ալ թոյլ պիտի չտանք», յայտարարեց Էրտողան:

## ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

### ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Հայաստանի Ազգային Անվտանգութեան Խորհուրդին նախաձեռնութեամբ, Մայիս 15 և 16-ին Երեւանի մէջ պիտի կայանայ «Անվտանգութիւն և համագործակցութիւն Կովկասեան տարածաշրջանին մէջ և անոր շուրջ» խորագիրի տակ միջազգային խորհրդաժողով: Խորհրդաժողովին պիտի մասնակցին 25 երկիրներու պատկերակցութիւններ:

### ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ Է ԹԱՅԵՖԻ ԴԵՍ

Մարտ 14-ի Ուժերու ընդհանուր քարտուղարութիւնը գոյուցուց Թայյեֆի համաձայնագիրը չեղեալ նկատելու ընդդիմութեան տրամադրութիւններէն: Քարտուղարութիւնը ընդգծեց, թէ երրորդ հանրապետութեան գաղափարը Թայյեֆի համաձայնագիրին շուրջ յեղաշրջում մըն է և պետական կառոյցները քայքայելու դէմ ուղղուած սպառնալիք մը: Մարտ 14-ի քարտուղարութիւնը ընդգծեց, թէ Տոնայի համաձայնագիրին կառուած մնալու ընդդիմութեան կեցուածքը ժողովրդավարական կառոյցները ջնջելու միտում մըն է:

## ԳԱՆՆԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ ԿԱՐԱԳՈՅՐԸ ԲԱՐՉՐԱՅԱԲ

Պաշտօնական հանդիսութեամբ մը, երէկ տեղի ունեցաւ Գաննի ֆիլմարուեստի 62-րդ միջազգային փառատօնին բացման արարողութիւնը: Այս տարուան մրցոյթը կը նկատուի վերջին տարիներու ամենահետաքրքրական մրցոյթներէն մէկը: Փառատօնին գլխաւոր մրցանակին կը յաւակին 20 ժապաւէններ: Փառատօնին նախագահութիւնը կը գլխաւորէ դերասանուհի Իգայէլ Հիպպը:

# ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՒԱՔ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 16 Մայիս 2009-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Խախիկի Սահակեան դաշտին շրջափակէն ներս, Նոր Հաճըն:

Հաւաքի աւարտին տեղի պիտի ունենայ ազգային յեղափոխական երգերու փառատօն:

ՀՐԱԲԵՐ  
Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՂՈՒՆԵՐՈՒՄԸ ՄԱՐՄԻՆ